ՍՈՒՐԲ ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Փետրվարի 13-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հանդիսավորությամբ նշվեց Սուրբ Ղևոնդյանց քահանաների տոնը: Տոնի առիթով Միածնաէջ Մայր Տաճարում մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Տ. Պարույր քահանա Ավետիսյանը:

Ս. Պատարագի ընթացքում խոսված իր քարոզում Տեր Հայրը ներկայացրեց տոնի խորհուրդը՝ անդրադառնալով Ղևոնդյանց քահանաների հոգևոր սխրանքին: «Չկան այսօր այնպիսի ահասարսուռ պատերազմներ, կենաց-մահու կռիվներ, ինչպիսին Ավարայրի դաշտն էր, սակայն դա չի նշանակում, որ Սրբոց Ղևոնդյանց պատգամն այսօր չի կարող գործել: Սրբոց Ղևոնդյանց պատգամը միայն ու միայն պատերազմի դուրս գալու համար չէ, առհասարակ կյանքի ցանկացած ոլորտում մենք պետք է այդ նույն հավատքով հաղթանակներ տանենք՝ սկսյալ մեր ընտանիքից, մեր միջավայրից, քաղաքից և մեր համազգային բոլոր տեսակի խնդիրներից» ,- նշեց Տեր Պարույրն իր խոսքում: Տեր Հայրը հաստատեց, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, որ դարեր շարունակ պահապան և զորավիգ է եղել հայրենի երկրին և հայ ժողովրդին, այսօր ևս նույն վճռականությամբ ու հավատքով կանգնած է՝ զորացնելու մեր Հայրենիքը և քարոզելու ու հավատքի մեջ զորացնելու մեր ժողովրդին:

«Հայ հոգևորականությունը տարավ արիության հաղթանակ, և այդ հաղթանակով կերտվեց հայ հոգևոր դասի դեմքը և դիմագիծը: Ինչքան էլ որ լինեն նեղություններ, դժվարություններ, արտաքին հարվածներ և ներգործություններ, այնուամենայնիվ, հայ հոգևորականությունը պիտի հաստատուն և անփոփոխ մնա, որովհետև մշտապես հավատարիմ է Քրիստոսի խոսքին և նույն ուղղափառ դավանությամբ, եթե անգամ հարկ լինի, պիտի խաչակից դառնա Քրիստոսին»,- ասաց Արժանապատիվ Տեր Հայրը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ